



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենը և տարրել նյութը ցույկացած ձևավայրով կամ կրկնով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը՝ ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅ ՈՐԲԱԿՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԻՆԻԱՄՍԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅ ՈՐԲԱԿՆԱՄ ԸՆԿ. ԳԱԶԻՐԵՒ ՀԱՏՈՒՄԾԻՆ

ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎԻՆ

1918 ՆՈՅԵՄԲԵՐԻՆ 1919 ՅՈՒՆԻՍ 31



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ

ԳԱԶԻՐԵՒ

1922



ՀԱՅ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ԻՆՎԱՄՍԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿ. ԳԱԶԻՐԵՒ ՀԱՏՈՒԱԾԻՆ

ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎԻՆ

1918 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1919 ՅՈՒՆԻ 31

Հայոց
Հայոց



ՏՊԱԳՐ. ՓԱՐՈՍ

ԳԱԶԻՐԵՒ

1922

Մեծայարդ Տիար Ատենապետ
Հայ Որբ . Բնկ . Պատ . Բնդհ . Ժողովոյ
Մայր Դիւանին

Աստ

Ինչպէս անցեալ Նոյմ . 17 ին գումարուած Բնդհ .
Ժողովի ատենապրութենէն տեղեկացաւ Պատ . Ժո-
ղովդ , նոյն նիստին մէջ , Վարչական Ժողովոյ ընտ-
րութիւնը որոշուեցաւ յետաձգել մինչեւ վաւերա-
ցումը նոր Կանոնագրին՝ Ազգ . Իշխանութեան կողմէ :

Նոյն Բնդհ . Ժողովը , Կանոնագրին ինչ ինչ կէ-
տերուն մասին , Գահիրէի և Ազեքսանդրիոյ համանուն
Ժողովներուն միջեւ կեցած տարակարծութիւնները՝
երկուստեք որոշուած պատուիրակային Ժողովով մը
բառնալու համար , իր մէջէն լիազօր Յանձնախումբ մը
ընտրեց յանձինս Տեարց Փրօֆ . Յ . Թ . Գայաեանի ,
Օհան Տէրվիշեանի և Գրիգոր Դարբինեանի . Ազեք-
սանդրիայէն նշանակուած էին Տեարք Թովմաս Թօ-
փուղեան , Յ . Ազտարեան և Ա . Շալճեան : Յանձնա-
խումբին նիստը տեղի ունեցաւ ի Գահիրէ , 5 Յունվար
1919-ին , և խնդրոյ առարկայ յօդուածներու մասին
հասկացողութիւն մը գոյանալով՝ Կանոնագրիրը ստա-
ցաւ իր վերջնական ձեւը , և Ժողովիս Դիւանը կանո-
նագրէն Յ օրինակներ , Փետր . 19 թուակիր նամակով
մը յղեց Ազգ . Իշխանութեան՝ խնդրելով անոր վա-
ւերացումը : Այս գործը , հարկ է ըսել որ՝ սպասուա-
ծէն շատ տւելի ժամանակ գրաւեց , և մենք այս
յապացումին առթիւ մի քանի անգամ դիմումներ

կատարեցինք Աղջ . իշխ . մօռ , և պատասխան ստացանք թէ՝ կանոնադիրը Աղեքսանդրիոյ Քաղ . Ժողովին ուղարկած էր , թէ տեղական դէպքերու պատճառաւ տեղը չէր հասած , և հարկ եղած հետապնդումները կը կատարուէին ևլն . : Վերջ ի վերջոյ երեւան եկաւ որ անիկա , Տիար Լեւոն Մկրտիչեանի թուղթերուն մէջ ատեն մը թաղուած մնալէ վերջ , հասած էր Աղեքսանդրիոյ Քաղաք . Ժողովին , որ պիտի փութար վերադարձնել զայն Գահիրէ :

Մենք համբերելէն յոգնած՝ անցեալ Մարտ 26-ի նիստին մէջ որոշեցինք համակով մը ինողրել Մայր Դիւանէն , որպէս զի հաճի Ընդհ . Ժողովը ի նիստ հրաւիրել : Առ այդ տպել տուինք հրաւիրագրեր , որոնց մէկ օրինակն ալ ատենին երեւցաւ Յուսաբէր թերթին մէջ : Հազիւ բաժնել սկսած էինք զանոնք՝ ահա վրայ հասան տեղական վերջին ծանօթ դէպքերը և վերիվայր շրջեցին մեր ծրագիրները :

Պատ . Քաղաք . Ժողովը Որբախնամին Ընդհ . Ժողովին Դիւանին ուղղեալ Յուլիս 4 թուակիր նամակով մը , հաստատելով անոր Փետր . 19 թուակիր նամակը , կը տեղեկացնէր թէ՝ Ծնկերութեանս կանոնագիրը երկու քաղաքաց Քաղաք . Ժողովներու քրննութեան բովէն անցած՝ և ինչ ինչ փոփոխութիւններու ենթարկուելէ և վաւերացուելէ վերջ՝ մեզի կը վերադարձուէր :

Կանոնագրին մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները երենց կարգին , կը յանձնենք Ժողովիդ նկատառութեան :

Մինչեւ վերջին բողէն Վարչութիւնս պարտաւոր էր անշուշտ իր ստանձնած յանձնաւութիւնները և ուղագիրն նուիրումով մը կատարել : Եւ այսօր , անոր անդամներէն իւրաքանչիւրը , ձեռքը խղճին

դրած՝ կրնայ քաղցր գոհունակութեամբ մը հաստատել թէ՝ երբէք Հայ Որբախնամ Ընկերութեանս օգուտին հակառակ քայլ մը չէ տռած, և ըստ այսմ կուզայ այսօր լնել իր վերջին իննամսեայ գործունէութեան հաշուեառութիւնը :

ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԹԻՒԲ

Ընկերութեանս երկուու անդամներու թիւը, մինչեւ 1919 Մարտի կէսը բարձրացաւ 620-ի : Տեղական վերջին գէպքերը ստկայն, տարաբազզաբար բաւական պակսեցուցին այդ թիւը : Անդամներէն ոմանք, ազգին համեստ և պարտաճանաչ զաւակները, ենթարկուած ըլլալով մեծ վնասներու, հարկադրուեցան հրաժարիլ անդամակցութենէ, այնողէս որ ներկայիս ունինք 550 երկուու անդամներ, որոնց անդամավճարներէն գոյացած հասոյթն է 28 եգալ . ոսկի:

ՈՐԲ ԱՐԴԵԳԻՌՈՂՆԵՐ

Գահիրէի և Աղեքսանդրիոյ Վարչական քոյր Ժողովները, թղթակցութեամբ և պատուիրակային ժողովներով, որոշոծ էին որ՝ Տիկնանց Յանձնախումբերու անդամունիները փոքր խումբերու բաժներուած՝ ցրուին ժողովուրդին մէջ և աշխատին՝ ազգայիններու կարողութեան համեմատ՝ որբեր որդեպըրել տալ: Այս գաղափարը, իր լայն գիծերուն մէջ, իրականութիւն գտաւ՝ Գահիրէ և Աղեքսանդրիակազմակերպուած որբանպաստ խանդավառ հաւաքոյթներու մէջ, որոնք մեր գործին հանդէպ ժողովուրդին խորունկ համակրանքին կարկառուն աղտցոյցներն եղան: Գահիրէի մէջ որդեպըրուեցան 240-250 որբեր և անոնցմով, ինչպէս և նուիրատութիւններէ

ապահովուեցաւ 3000-3500 ոսկիի գումար մը . իսկ Աղեքսանդրիոյ մէջ որդեգրուած էին 80 որբեր և ապահովուած էր 1500 ոսկի . միասին հաշուելով նուիրատուութեանց արդիւնքը :

Սոյն անմոռանալի հաւաքոյթները և անոնց գեղեցիկ արդիւնքները ցոյց տուին թէ՝ ժողովուրդին մէկ խոշոր զանգուածը ինչ անսահման խանդաղատանքով կը գուրգուրար իր որբերուն վրայ : Ուստի , օրեր առաջ ծրագրուած որդեգրումի գործին ձեռնարկեցին Տիկնանց Յանձնախումբին ժիր անդամունիները , և մի քանի օրուան մէջ որդեգրուեցան բաւական թուով որբեր : Բայց այս գեղեցիկ գործը նոյնպէս վերջ գտաւ տեղական ապրիլեան ծանօթ գէպքերու հետեւանքով : Ասկէ զատ որը որդեգրողներէն մէկ մասն ալ նոյն պատճառներով անկարողութեան մատնուած , չի կրցաւ իր յանձնառութիւնները յարգել :

Ներկայիս ունինք 130 որբ որդեգրողներ , և որդեգրուած որբերու թիւն է 170 :

Ծանօթ յուղումները մեղ չի յուսահատեցուցին սակայն , և մենք յոյս ունինք թէ՝ Պատ . ժողովուրդը , նոյն լաւագոյն զզացումներով զօրացած , իր լաւ օրերուն պիտի փութայ վերստին ճանչնալ իր պարտականութիւնը : Բանաւոր դատեցինք որ , իրենց յանձնառութիւնը յարգելու բացարձակ անկարողները բացառելով , վճարելու կարողներուն առանձին առանձին դիմում ըլլայ և խնդրուի վճարումները շարունակել : Զայս կը յանձնենք մեր յաջորդներուն ի գործադրութիւն :

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

Անցեալ ժողովին տեղեկացուցած էինք թէ հաստատութիւնս իր առաջին Մասնաճիւղը ունեցաւ եթովովիոյ մէջ և գործը օրինակելի նուիրումով ու եռանդով կը վարեն Առխոտապապայի խումբ մը հայրենանուէր կտրիճ հայուհիները։ Այս անգամ հաճոյքով կուղանք տեղեկացնել թէ՝ սոյն Պատ։ Մասնաճիւղը մէկ տարուան մէջ Որբախնամիս սնառուկին ապահովեց 719 անգլ։ ոսկի, 10 շիլին և 4 բէնս գումար մը, ուղարկելով նոեւ Մասնաճիւղին մէկ տարուան զործունէութեան հաշուետուութիւնը։

Հին Վարչութիւնը փոխուած է և նորեր ստանձնոծ են հիներու գործը ու զայն կը վարեն նոյն գովիկելի նախանձախնորութեամբ, մեր սոյն Մասնաճիւղը կը բաղկանայ 41 անգամաւհիներէ։

ՆԻԿ ՊԲԻՓՅՐԹԻ ՏԻԿՆԱՅ ՄԱՍՆԱՃԻՒՂ(ԱՄԵՐԻԿԱ)

Այս մասնաճիւղը հաստատութեանս հետ յարարարերութեան մտաւ անցնող Յունիս ամսուն, մեզի ուղարկելով ինպաստ Որբախնամիս կազմակերպուած հանգէս-խնջոյքի մը հասոյթ՝ 170 տոլարի չէքը և խնդրելով միանգամայն յարարերութեան մտնել իրենց հետ և ուղարկել ընդարձակ ծանօթութիւններ զործին շուրջ։ Ժողովս հաճոյքով ընդունեց այս ինքնամտույց առաջարկը և իր առենին փութացուց հարկ եղած տեղեկութիւնները և հրահանգները լիշեալ Մասնաճիւղին։

ԺԼՆԵՎԻ ՏԻԿՆԱՆՅ ԲԱՐԵՍԻՐԱՅ ԸՆԿ .

Ապրիլ 23 թուակիր նամակի մը մէջ ներփակելով 10,000 (տաս հազար) ֆրանքի չէք մը , կը տեղեկացնէր որ սոյն գումարը կ'ուղարկեն , Որրախնամիս միջոցաւ մեր որբուկներուն կարիքներուն դործածուելու համար , և կը խնդրէին միշտ հաղորդակցութեան մէջ ըլլալ հաստատութեանս հետ՝ իրք անոր մէկ մասնաճիւղը :

Սոյն Մասնաճիւղին հետ եւս յարաբերութիւն կը մշակուի կանոնաւոր կերպով :

Ամերիկա և այլուր հրաւէրներ ուղղուած են Որրախնամիս մասնաճիւղիր կազմելու համար :

ՕԺԱՆԴԱԿՈՂՆԵՐ

Ա . — Տիկ . Զապէլ Փանոսիան (Ամերիկա) .

Բ . — Բօր-Սայիմի Հոյ համայնք .

Ա . Յայտնի գեղարուեստագէտ Տիկ . Զ . Փանոսեանի յարդ Ամերիկայի ինչ ինչ քաղաքներու մէջ կազմակերպած նուազահանողէսներու հասոյթները ստացած ենք հետեւեալ կերպով .

Առաջին անգամով՝ 52 անգլ . ոսկի .

Երկրորդ անգամով՝ 65 „ „ „

Երրորդ անգամով՝ 13 „ „ „ 18 շիլին .

Սոյն գումարներէն 65 ոսկիին չէքը տակաւին կը մնայ անդանձելի . անոր արտօնուիլը հրամայող նամակը պանքին հասած չըլլալուն պատճառաւ . այս մասին հարկ եղածը գրած ենք Ազն . Տիկնոջ , որ ինչպէս կը տեղեկանանք , որոշած է մեր որբերուն ի նպաստ կազմակերպելի նուազահանողէսներու հասոլթը բարձրացնել մինչեւ 1000 ոսկի :

ԲՈՐ-ԱՎԱՅԻՑԻՑ

Բօր-Ավայիտի գրեթէ մատի վրայ համբուլող Հայութիւնը, որբերու հանդէպ այնքան տաք խանդազատանքով լեցուն, մի քանի ամսուան ընթացքին Որբախնամիս ապահովեց 150-170 սոկիի գումար մը, ներկայացումներով, թէյասեղանով, հանգանակութեամբ ևն .։ Մենք հաճելի պարտականութիւն մը կը համարենք շնորհակալութեամբ արձանագրել հոսանունները այդ որբանուէր ափ մը սրտոտ Հայութեան, որուն մէջ իրենց գուրգուրանքով և գործունէութեամբ կը փայլին, Տէր և Տիկին Մ. Մասրաֆ, Օր. Ռ. Գալֆայեան, Տեարք Ն. Թոգաթլեան, Ա. Թագւորեան, Գ. Թէքէեան և Քէմրի բժիշկներէն Տօքթ. Սալրի։

Այժմ ժապաւինեալ և կնքեալ նուիրագրութեան տետրակ մը ունինք Տէր և Տիկ. Մ. Մասրաֆի մօտ, ուր կ'արձանագրեն տեղէն անցնող Հայ և օտար ծանօթ անձնաւորութիւններէ որբերու անունով ստացած գումարները։ Այս ձեռնարկին յաջողութեան մասին մեծ վստահութիւն ունինք։

Հաճելի պարտականութիւն մը ունինք՝ նոսքապարակաւ մեր խորին շնորհակալութիւնը յայտնելու Ազն. Օրիորդ Նուարդ Շազոյեանի, որ Մայիս ամսուն Խարթումի մէջ կազմակերպուած նուագահանդէսին իր բերած գնահատելի աջակցութեամբ, անոր արդիւնքէն, ինչպէս նաեւ հանգանակութենէն մեր որբերուն յաջողեցաւ ապահովել 350 սոկիի գումար մը։

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Որբախնամիս Կիլիկիոյ պատուիրակներէն Տետրք
Յ. Աղաղարմի և Հ. Աղատեանի ջանքերով կողմուեցաւ սոյն նոր Մասնաճիւղը, որ այժմ ունի 50-ի չափ անդամներ։ Վասահ Էնք թէ անիկա կը դառնայ մեր կարեւոր մասնաճիւղերէն մին, ինչպէս ցոյց կուտայ գործին հանդէպ ցարդ անոր ցոյց տուած ոգեւորութիւնը։

Քանի որ մասնաճիւղերու մասին խօսեցանք, իր կարգին կ'ուղենք արձանագրել հոս մեր ղիմումը ծանօթ զրագիտուհի Տիկ. Զ. Եսայեանի մօտ, իր եւրոպա ուղեւորութեան առթիւ, այն կողմերը հայ դաղութներու մէջ Որբախնամին մասնաճիւղեր կազմելու առաջարկութեամբ, զոր յարդելի տիկինը սիրայօժար ընդունեց։ Սոյն նորատակին համար իր երթեւեկի ծախս իրեն տրամադրեցինք 50 սակիի գումար մը։

Տիկինը Փարիզ հասնելուն, Աղգ. Պատուիրակութեան կողմէ Հայկ. Տեղեկատու Բիւրոյի մէջ կարեւոր պաշտօնի մը կոչուած ըլլալով, դեռ չէ կրցած իր յանձնառութիւնը կտտարել։

Վերջերս Տիկ. Զ. Եսայեանի գրեցինք որ, եթէ իրեն անկարելի պիտի ըլլայ մօտերս լծուիլ Որբախնամ գործին, հաճի յիշեալ դումարը վերագարձնել։

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Հակառակ անցեալ ժողովին մէջ այս մասին յայտնած մեր յոյսերուն, և հակառակ գործին հանդէպ մեր ունեցած անկեղծ վերաբերումին ու պարաստակամութեան, որոնք կը յուսայինք թէ լաւա-

գոյն երաշխիքը պիտի ըլլային՝ մեր դիմացիններուն հետ որբախնամ հողի վրայ համաձայնութեան մը, կը ցաւինք յայտնել որ բազծածուած համագործակցութիւնը չիրականացաւ:

Մենք կը փափաքէինք համագործակցութիւն մը՝ ուր Որբախնամիս արժանապատութիւնը և անկախութիւնը յարգուած ըլլային։ Ամիսներ տեւող բանակցութիւններ մեզ համոզեցին, սակայն, թէ Հ. Բ. Բ. Միութիւնը բնաւ տրամադիր չէր մեր սոյն տարրական պայմանները յարգելու։ Այնպէս որ մենք ստիպուած եղանք վերջ ի վերջոյ իսպառ դադրիւ այդ հարցով զբաղելէ։

ԱՐԲԱՆՈՑՆԵՐ

Մինչեւ յարդ հաստատութիւնս իր խնամքը տարսծած է հինգ որբանոցներու վրայ ուր կը պատըսպարուին 3200 երկուու որբեր։ Այդ որբանոցներն են հետեւեալները, իրենց յատկացուած տարեկան պիւտձէներով։

1.— Պազտատ-Պագուպայի Որբանոց, 1200 որբ, պիւտձէ՝ տարեկան 4000 ոսկի։

2.— Առանայի Որբանոց, 600 որբ (այս թիւը հետզհետէ կ'անի նոր ազատուած որբերով), տարեկան 6000 ոսկի պիւտձէով։

3.— Անթուրայի Որբանոց, 600 որբ, կըթական խնամքին համար ամսական 200 ոսկի պիւտձէով։

4.— Դամասկոսի 220 որբեր, պարբերական նպաստներ։

5.— Այնթապի Որբանոց, 5—600 որբ, 4000 ոսկի պիւտձէով։

1. ՊԱՐՏԱՏԻ-ՊԱԳՈՒՊԱՅԻ ՈՐԲԱՆՈՅ

Պաղտատէն՝ Մուշեղ Արքեպիսկոպոսէ հասած այն տեղեկութիւններուն վրայ թէ՝ Վանէն և Սալմաստէն (Պարսկաստան) հոն հասնող տարագիրներու կողքին կային նաեւ խնամքի կարօտ, թշուառ 1200-է աւելի երկսեռ որբեր, Աղեքսանդրիոյ քոյր Վարչութեան հետ թղթակցօրէն և ապա երկու խառն ժողովներով խորհրդակցաբար, որոշեցինք սոյն որբերու խնամքը ստանձնել և զայն վարել Մուշեղ Արքազանի հովանաւորութեան տակ և Բրիտանական Զին. Իշխանութեան գործոն օժանդակութեամբ:

Որբերու ինչ ինչ կարիքներուն համար յատկացուցինք տարեկան 4000 ոսկիի պիւտճէ մը: Մեր այս որոշումը ժամանակին հեռագրով և նամակաւ տեղեկացուցինք Մուշեղ Արքազանին և տեղւոյս Աղդային Միութեան ձեռամք անմիջապէս 1000 (հազար) ոսկւոյ առաջին առաքում մը փութացուցինք նախնական պէտքերու գործածուելու համար: Ի պատասխան մեր հեռագրին՝ Արքազանը 1918 Դեկտ. 14 թուակիր հեռագրով մը կը յայտնէր թէ «Հազար ոսկին ստացած և որբանոցը կազմակերպած է վրաններու տակ, Պաղտատի մօտ Պաղուազ կոչուած վայրի մը մէջ, պատսպարելով 600 երկսեռ որբեր (մնացեալները կը հասկնանք թէ Ամերիկեան հովանաւորութիւնը կը վայելին), թէ՝ Զին. Իշխանութիւնը պիտի հոգաց որբերու մնունողը և տոողջապահական պէտքը: Փոխազրեցիք 1000 ոսկի եւս»:

Այն հեռագրէն վերջ նամակով մը ստացանք մանրամասն տեղեկութիւններ և Որբանոցին կազմակերպութեան մասին ընդարձակ տեղեկագիր մը: Այսպէս մեր յիշեալ Արքանոցը 9—10 ամիսէ ի վեր կը

վայելէ Որբախնամիս պաշտպանութիւնն ու խնամքը : Որբերու ֆիզիքական և առողջական վիճակը լաւ է : Ընոնք կը ստանան ուսում և մարմնակրթութիւն, ուսուցչական խումբի մը կողմէ :

Վերջերս որբերու թիւը բարձրացաւ 1200 ի., ինչպէս տեղեկացուցին մեզ, հեռագրով և նամակներով, Գեր. Մուշեղ Արքեպիսկոպոս և Միջազգեաքի Տարագրելոց Պաշտպան Մարմինը, Մուսուլէն հասած 300 և Համատանէն (Պարսկաստան) հասած նոյնքան որբերով : Այս որբերը կը գտնուեին շատ խղճակի վիճակի մէջ և անոնց նախնական պէտքերը հսկողու համար փութացուցինք 1000 (հազար) սոկոյ գումար մը, որով ցարդ Պաղտատ—Պագուղայի Որբանոցին մեր առաքումներուն համագումարը եղաւ 3500 սոկի :

Նկատելով որ Մուշեղ Արքազան յանախ կը բացակայէր թեմէն, և տեղեկագիրներ, հաշիւներ ժամանակին չէին հասներ մեզի, որոշեցինք ներկայացուցիչ մը ուղարկել Պաղտատ, յանձին Տիար Կարգան Երամեանի, անօրէն-ուսուցչի և Որբախնամիս ներկայացուցչի հանգամանքով, որպէս զի կազմէ Որբախնամ Մարմին մը, մասնակցի անոր գործերուն և հոկէ լնդն . գործին : Առ այս նամակ զրած, ենք յիշեալին, իր հաւանութիւնը ձեռք բերելու համար :

ԱՏԱՆԱՅԻ ՈՐԲԱԽՆԱՅ

Սուրիոյ Եղիպտահայ Պատուիրակութեան անդամներէն Տասնապետ Պրն. Ռուրէն Հերեանէ, անցեալ տարւոյ Դեկտեմբերին, զեռ տոկէ չի մեկնած, Որբախնամո խնդրած էր, որպէս զի իր ճամբորդութեան միջոցին այցելած բոլոր վայրերու որբերու կացութեան մասին ճշգրիտ տեղեկութիւններ տայ մեզի : Յիշեալլ նամակով մը ատենին ամփոփ տեղե-

կութիւններ տուած էր Պէյրութի, Զահլէի, Դամասկոսի, Հոմսի, Համայի և լու որբերու մասին։ Իր առաքելութենէ վերադարձին, սոյն տեղեկութիւններուն վրայ աւուցնելով ուրիշ տեղերու որբերու մասին ունեցածները, ծանրացաւ Ատանայի 350-է տւելի որբերուն թշուառ վիճակին վրայ։ Անոնք, տեղւոյն Ազգ։ Միութեան կողմէ չէնքի մը մէջ հաւաքուած, հազիւ մէկ ամսուան բաւելիք մնունդ ունէին։ Տիար Ռ. Հերեան ջերմապէս յանձնաբարեց մեզի այդ որբերուն խնամքն ստանձնել անյապազ, զի անոնք ոչ մէկ օդնութիւն կը ստանային զուրոէն, և մինչեւ այդ զոյութիւննին քարչ տուած էին պատահական նպաստներով միայն։

Մենք որոշեցինք ստանձնել Ատանայի Որբանոցին հոգը եւս, կոթնած արտասահմանի և Եզիզոսի Պատ։ Հայ հասարակութեանց որբանուէր զգացումներուն և Որբախնամիս հանդէս ցոյց տուած հնչուն համակրանքին վրայ։ Դահիրէ և Ազեքսանդրիս կազմակերպուած որբանողաստ հուտքոյթները եկան հաստատել թէ մենք սխուրած չէնք մեր յոյսերուն մէջ։ Առյն հաւաքոյթներուն յանձնառութեանց արդիւնքը (որդեգրումներով, նուիրուած զարդեղէններով և զրամով) եղաւ մօտաւորապէս 5000 ուկի, ինչպէս վերեւ յիշեցինք։

Այսօր մեր սոյն Որբանոցը, փոխանուկ 350 ի, կը պատապարէ 600 երկուու որբեր, որոնց թիւը օր օրի կ'աճի, նոր ազատուած որբերով, ինչպէս կը տեղեկազրեն մեզի Կիլիկիոյ մեր պատուիրակները։

Յարդ Ատանայի մեր Որբանոցին ուղարկած ենք 2500 ուկի և 2417 կտոր հազուստեղէն։ Մօտ օքն կ'ուղարկենք բաւականաչափ զատագրքեր և ուրիշ հազուստեղէն եւս։

Որբերու առողջական վիճակը լու է։ Պէտք է աւելցնել որ Որբանոցը ստանձնելու և խնամակալ մարմին մը բնարելով՝ զայն մեղի հետ հաղորդակացութեան դնելու համար պատուիրուի հանգամանքով նախաղէս Առանա ուղարկեցինք Տիար Ռ. Հերեան, որ գործը զեռ չաւարտած՝ հարկադրուեցաւ մեկնիլ զէպի Տէր-Զօր, ուսկից ստացուած իր վիրջին նամակէն կը տեղեկանանք թէ՝ հոն եւս բազմաթիւ որբեր կան, որոնք մէկ կողմէ կը հաւաքուին և կ'ուղարկը ին զէպի Հալէպ։ Զանոնք խնամող ձեռքեր հարկաւոր են և որբին կեանքը թոռուցիկ խօսքերով աղահովուած ջրլուր, նիւթական և բարոյական լայն միջոցներ արամազրել պէտք է, և այն անմիջապէս։

ԴԱՄԱՍԿՈՍԻ ՈՐԲԵՐԸ

Սուրբոյ Եղիոլտահայ Պատուիրակներէն Տեսքը Աէֆէրհանէ, Ռ. Հերեանէ, ինչպէս նույն պատահան անցորդներէ և Դամասկոսի Ազգ, Միավունան Գանձապահ Տիար Սաղրբեանէ տեղեկանալով որ՝ այդ քաղաքին մէջ կան բազմաթիւ որբեր, որոնց մէկ մասը իրը տարապիր կը խնամուի Բըհանական Զին։ Եշտանութեան կողմէ, իոկ մէկ վոքը մասը, թուով 220, կը խնամուի տեղական միջոցներով, Ազգային Միավունան կողմէ, և կը գտնուին յետին ծայր թըշուառ վիճակի մէջ, որոշեցինք խելոյն այն որբերու խնամքն եւս ստանձնել առժամաբար, նկատելով որ Դամասկոսը Հայաստանի մաս չի կազմեր, և մօտ օրէն որբերը կարելի պիտի ըլլայ փոխազրել Կիլիկիոյ կամ Հայաստանի մէջ մեր ունենալիք որբանոցներէն մէկուն մէջ։

Յարդ սոյն որբերուն համար ուղարկած ենք 200 եզտ . սոկի : Ինչպէս կը տեղեկանանք՝ սոյն որբերը փոխաղբուած են մասամբ Հալէպ , մասամբ աւելի ներսերը , ներգաղթող պաշտպաններու խնամքին ներքեւ :

ԱՆԹՈՒՐԱ

Տեղւոյս Ազգ . Միութիւնը Սուրբոյ Եղիստահայ Պատուիրակներէն ստացած զրութիւններէն տեղեկանալով որ Անթուրայի մէջ շուրջ 600 որբեր կը խնամուին Ամերիկեան կարմիր Խաչի կողմէ , Դեկտ . 28 թուակիր համակով մը մեզի կը թելաղբէր ամսական 200 սոկիով մտանակցիլ յիշեալ որբերու խնամքի դործին , այդպիսով բարոյական իրաւունք մը ձեռք բերելու համար Որբանոցին վրայ , քանզի որբերը մնալով օտար ձեռքերու մէջ՝ պիտի զգացումով և լեզուով օտարանոյին հաւանօրէն : Որբախնամս այս բանաւոր առաջարկը սիրայօժար ընդունելով՝ որոշեց որբերու կրթական հոգը ստանձնել : Յարտրերութեան մտանք Պէյրութի Ազգ . Միութեան հետ և խնդրեցինք որ մեր կողմէն Ամերիկեան կարմիր Խաչին և Որբանոցի Տեսչութեան կարծիքը շօշափէ , տեսնելու համար թէ կարելի պիտի ըլլա՞ր հասկացողութեան մը գալ անոնց հետ այս մասին : Բանակցութիւնները յաջող գացին և մենք ստանձնեցինք յիշեալ հոգը եւս :

Ազգ . Միութեան միջոցաւ 500 սոկի փոխաղբեցինք Պէյրութ , համանուն Միութեան , որ Տիար Խ . Գուուզեանի տնօրէնութեան տակ ուսուցչական խումբ մը պաշտօնի կոչեց : Որբերը սկսան սիրով փարիլ մայրենի լեզուին և իրենց հայ ուսուցիչ և ուսուցչունիները խանդաղատանքով սիրեցին :

Որբերուն տոհմային կրթութիւն մը տալու պար-

տականութեամբ հեղինակութիւն մը շահած ըլլուլով
Անթուրայի Որրանոցին վրայ , մեր ներկայացուցիչ-
ները իրաւունք ունեցան յաճախակի այցելութիւններ
տալ որբերուն և հետաքրքրուիլ անոնց ընդհանուր
վիճակով : Տասնէն տասնըհինգ հոգինոց հայ ուսուց-
չական խումբը լաւագոյն հսկող մարմինն էր որ
ստեղծուեցաւ հոն :

Վերոյիշեալ 500 ոսկիէն զատ Անթուրայի մեր
որբերուն ուղարկած ենք նաև 8 մնառուկ «Նէսթլէ»
խտացեալ կաթէն , 226 զոյգ կօչիկ , 192 կտոր հա-
գուստ և 150 ընթերցանութեան գիրքեր :

ԱՅՆԹԱՊ

Ասկէ գրեթէ 7—8 ամիսներ առաջ մեր հեռագ-
րական դիմումին վրայ , Հոնտոնի Հայոց Միացեալ
Ընկերութիւնը Դեկտ . 2 թուակիր հեռազրով մը մեզի
կը տեղեկացնէր թէ՝ Ժէնէրալ Քլէյթլնի միջոցաւ
2000 Անգլ . ոսկի ուղարկած էր : Հեռազիրը ստանա-
լով , մենք փութացինք մեր կողմէն Ժէնէրալ Քլէյ-
թլնի քով ուղարկել ժողովիս անդամներէն Տիար
Յակոր Պէտքանութեանը , տեղեկանալու համար թէ գու-
մարը հասած էր : Ի պատասխան մեր դիմումին ,
Բրիտանական Զին . Իշխանութիւնը նամակով մը կը
պահանջէր մանրամասնութիւններ՝ Ընկերութեանս
նպատակին , գործունէութեանը , ևլն . մասին : Դեկտ .
10 թուակիր նամակով մը հարկ եղած մանրամաս-
նութիւնները տուինք և Զին . Իշխանութեան օժան-
դակութիւնը մեզի հետ ունենալու համար , առիթը
պատեհ համարելով , Այնթապի մէջ որրանոց մը բա-
նալու մեր ծրագիրը պարզեցինք իրենց , յայտնելով
թէ զրկուած 2000 ոսկին այդ ուղղութեամբ պիտի
գործածենք , եթէ Բրիտանական Զին . Իշխանութիւնը

հաճի իր գործակցութիւնը սերել մեղի։ Զին. Իշխանութիւնը ընդ առաջ գնաց մեր բազմանքին, յայտնելով սակայն, որ Այնթապ զինուորապէս գրաւուած չէր տակաւին, և երբ գրաւուէր՝ իրենք մեղի պիտի իմացնէին։

Մինչեւ Բրիտ. Զին. Իշխանութեանց կողմէ Այնթապի գրաւումը ծանուցանող գրութեան ժամանումը՝ երկու քաղաքներու Վարչական Ժողովները խնդրին մասին խորհրդակցութիւններ ունեցան, և նկատելով տեղին յարմարութիւննը, որոշեցին հոն բանալ որբանոց մը և հաւաքել շրջակայքը գտնուող ցիրուցան, անպատճապար որբերը։

Բրիտ. Զին. Իշխանութիւնը Մարտի վերջերը մեզ ուղղեալ նամակի մը մէջ ներփակելով Պէյրութէն հասած հեռագիր մը՝ կը հրաւիրէր մեր պատուիրակները հոն ուղարկել՝ Այնթապի մէջ մեր հաստատելիք որբանոցին մասին “Repatriation & Relief Committee” ներկայացուցիչներուն հետ նախնական խորհրդակցութիւններ և կարգադրութիւններ ընելու համար։

Այս աւետարոր նամակը և պատուարեր հրաւէրը կը հասնէին մեղի եղիպատական վերջին դէպքերու նախօրեակին։ Հետեւաբար կորսնցնելու ժամանակ չունէինք։ Եւ երջանիկ ենք հազարդելու որ բարերախտութիւնն ունեցանք ճամբայ հանել տալու պատուիրակութիւն մը՝ յանձինս Տեարց փաստաբան Յ. Աղազարմի և Հ. Աղատեանի, տալով անոնց ընդարձակ հրահանգներ և գործունելութեան ուղեղիծ մը։ Բայ այդ ուղեղիծին, Պատուիրակութիւննը և Պէյրութ պիտի տեսնուէր Relief-ի ներկայացուցիչներուն հետ և նախնական կարգադրութիւններէ յետոյ պիտի անցնէր, ըստ յարմարութեան, Դամասկոս, Հոմո, Համա, Հալէպ և Ատանա և կամ Պէյրութէն ուղղակի

Առանու, եթէ գործերը այդպէս ընել պահանջէին։ Մեր պատուիրակներուն գործը պիտի ըլլար իրենց գացած տեղերուն մէջ Ազդ։ Միութիւններու հետ համախորհուրդ կազմել Որբախնամիս մասնաճիւղեր, այցելել Անթուրայի Որբանոցը և կատարել հարկ եղած քննութիւնները։ Առանայի մէջ այցելել և պաշտօնապէս ստանձնել Որբանոցը, տեղեկանուլ որբերու և Որբանոցի ճշգրիտ կացութեան, կազմել ինսամակալ Մարմին մը և զայն ուղղակի յարաբերութեան մէջ դնել Կեղրոնիս հետ, աւելի մօտէն տեղեկանուլու համար գործին։ Այնթապ՝ ուսումնափերի և յարմար գոնելու պարագային հաստատել որբանոցը, զայն վարող մարմինը կազմել և յարաբերութեան մէջ դնել Կեղրոնիս հետ, Պատուիրակութեան յանձնաբարուած էր նաեւ աղահովիլ օսար աշխատակցութիւն և լին։

Տեարք Պատուիրակներ, Պէյրութէն, Առանայէն, և Հալէպէն մեղի ուղարկած գրութիւններով կը տեղեկացնեն թէ՝ աեսակցած են Պէյրութ Գնուլ։ Հօքըրի հետ՝ որ խոստացած է ամէն դիւրութիւն ընծայել և յանձնաբարուած է աեսնուիլ Հալէպ՝ Հազարապետ Թրօպրինի հետ, որուն բացակայութեանը, իր փոխանորդը հաւանած է որբ գլուխ օրական երկու եղիսկ. զահեկան մնաղաղին յատկացնել Այնթապի մեր որբերուն։ Կը յուսանք թէ մօտ օրէն Այնթապի Որբանոցին հաստատութեան մասին որոշ լուրեր կը հասնին մեղի։

Տեարք Պատուիրակներ Պէյրութի մէջ կազմած են 50 անդամներով Մասնաճիւղ մը, և մեղի զրկած են անդամներու անուանացանկը և մուտքի ու անդամավճարներու ցանկերը, որոնք հրատարակութեան պիտի տրուին Ընկերութեանս պարբերաթերթին մէջ։

Ատանայի մեր Որբանոցին մէջ հարկ եղած կարգադրութիւնները և փոփոխութիւնները ըրած են :

ԿՈՉԵՐ

Ինչպէս խմացաւ Պատ . Ժողովդ ցարդ տրուած տեղեկութիւններէն , Ընկերութեանս այս իննամսեայ գործունէութիւնը եղած է անհամեմատ աւելի բեղմնաւոր և արդիւնաւէտ քան նախորդ տարիները . ասիկա կը պարտինք արտասահման ուղարկած մեր հեռագրական կոչերուն և շրջաբերական նամակներուն , որոնցմէ ձեռք բերուած արդիւնքը եղած է շուրջ 8000 ոսկի : Այս պատկառելի արդիւնքը կը պարտինք մեծագոյն չափով Մայր Դիւանի Ատենադրութեանց գործը , իրեն գործակից ունենալով Ժողովիս անդամներէն Տիար Յ . Մարզպանեանը :

ԴԱՍԱԳՐԻՔԵՐ

Անժխտելի է թէ հինգ տարի տեւող համայնաւեր պատերազմը , ի միջի այլոց նաեւ դասագրքերու սովոր յառաջ պիտի բերէր հրապարակին վրայ : Ուստի , նկատի ունենալով հետզհետէ մեր ունենալիք որբանոցներուն մէջ անոնց անհրաժեշտութիւնը՝ 200 ոսկիի պիւտնէ մը յատկացուցինք առ այդ : Ցարդ գնած ենք 144.5 ոսկիի հայերէն ընթերցանութեան գրքեր : Մեր այդ գրքերէն ուղարկած ենք 150 օրինակ Անթուրա և 300 ալ Ատանա , մնացեալ 300 ի չափ գրքերը պիտի ուղարկենք ուր անհրաժեշտ նկատենք :

ՆՊԱՍՏԻ ԱՌԱՔՈՒՄՆԵՐ

Որբախնամս այս իննամսեայ միջոցին հետագայ վայրերու որբերուն ուղարկած է միանուագ նպաստներ, Ազգ . Միութիւններէ . Առաջնորդարաններէ և այլ ծանօթ ազգայիններէ հաստատագէս տեղեկանալէ յետոյ այդ վայրերու որբերուն յետին աստիճանի թշուառ կացութիւնը :

Ա . — Կեսարիա , 350 որբ , 500 ոսկի Սրբազն Պատրիարք հօր միջոցաւ , որ Ազգ . Միութեան ուղարկած իր Մարտ 22 թուակիր նամակովը կը յայտնէ սոյն գումարին ստացումը և Կեսարիոյ ու շրջակայից Տարագիրներու և Որբերու Պաշտպան Մարմինին յանձնումը :

Բ . — Համատան , 350 որբ , 500 ոսկի . Պաղտատի Առաջնորդարանի միջոցաւ և Տիար Հայկազուն Գույումնեանի անունով : Պաղտատի Առաջնորդարանը 14 Մայիս թուակիր նամակով մը կը տեղեկացնէ մեզի սոյն գումարը Համատանի 115 որբերուն փոխաղբելը : (Մնացեալ որբերը Պաղտատ փոխաղբուած են) :

Գ . — Դամասկոս 220 որբ , 200 ոսկի տեղւոյն Ազգ . Միութեան միջոցաւ :

Դ . — Սուրիոյ Եղիպտահայ Պատուիրակութեան 500 ոսկի , այլ և այլ վայրերու մէջ գտնուած անխրնամ որբերը հաւաքելու և մահուան ճիրաններէն փրկելու համար :

ՊԱՐԵՐԱՄԹԵՐԹ

Ընկերութեանս յարանուն գործունէութիւնը , ստացած նուէրները ատենին հրատարակելու պէտքը և որբախնամ գործը աշխարհի չորս կողմը գտնուած Հայութեան ծանօթացնելու հարկը անհրաժեշտ դարձուցած էին այլեւս ունենալ պաշտօնաթերթ մը :

Մանրակրկիտ հաշիւ մը ընելով տեսանք թէ 16
էջոց պարբերաթերթի մը հրատարակութիւնը, Որ-
բախնամիս գանձին վլայ բեռ մը չըլլալէ զատ, հա-
ւանօրէն ամսական փոքրիկ բան մըն ալ թողուր մեր
գանձին։ Հետեւաբար երկու քաղաքներու վարչական
ժողովներս խորհրդակցելով որոշեցինք «Որբունի»
անուն պարբերաթերթ մը հրատարակել Աղեքսանդ-
րիոյ մէջ, անոր հոգը յանձնելով խմբագրական առան-
ձին մարմինի մը, զեկուլարութեամբ Պրն. Հրաչեայ
Փէհրիզեանի։ Թերթը պիտի ծառայէ միմիայն Որբա-
խնամ Գործին։

Մեր սոյն պաշտօնաթերթին հինգ պրոկիները լոյս
տեսած են արդէն, և մենք վստահ ենք թէ Որբա-
խնամին անգամները և գործին համակիրները մասնա-
ւոր հետաքրքրութիւն մը պիտի ցոյց տան անոր
հանգէպ, այն տեղ օրը օրին հետեւելու համար Որ-
բախնամիս գործունէութեան։

ՀԱՍՈՒԹԱԲԵՐ ԶԵՌՆԱԲԿՆԵՐ

1. — Օրէրայի ներկայացում.

2. - Քիւրսալի որբանպաստ հաւաքոյթ.

3. — Կազմակերպուելիք լիճանանութիւն.

Օրերայի տարեկան ներկայացումէն, որմէ գոյա-
ցած հասոյթը եղաւ 2 և 2 տակի, և Քիւրսալի հաւա-
քոյթէն զատ ուրիշ ձեռնարկներ (թատրոն, հանգէս,
ներկայացում, և լու.) չունեցանք այս 9 ամսուան մէջ,
տեղական ծանօթ դէպքերու պատճառով։

ՔԻՒՐՍԱԼԻ ՈԲԲԱՆՊԱՍՏ ՀԱԽԱԲՈՅՑԹ

Մարտ 2-ի Քիւրսալի հաւաքոյթը եկաւ անգամ
մըն ալ հաստատելու թէ՝ գաղութիս Հայութիւնը առ

հասարակ սրտովին փարած էր որբախնամ նուիրական գործին։ Այդ օրը, մէկ—երկու ժամուան նուիրատութեան և որդեզրութեան արդիւնքը եղաւ 3000—3500 տոկի, Ընկերութեանս՝ անդամներուն վրայ աւելցան նաեւ նոր անդամներ։ Աղեքսանդրիոյ մեր քոյր Հատուածն ալ նշանակելի յաջողութիւններ ու նեցաւ նոյնանման հաւաքոյթներու մէջ, ապահովելով ոչ նուազ քան 1500 տոկիի յանձնառութիւններ, զարդեղէններ և զրամական նուէրներ։

Եզիստական վերջին դէպքերը, սակայն, ինչպէս վերեւ յիշեցինք, պատճառ եղան որ որբ որդեզրողներու մէկ մասը չի կարենայ իր յանձնառութիւնը կատարել, և ձեռք բերուած արդիւնքը բնականապէս նուազեցաւ զգալի չափով։

Մեզի պարտք կը համարենք մեր շնորհակալիքը արձանագրել հաս Պրն. Ռ. Հերեանի, որ այնքան խոշոր բաժին մը ունեցաւ Քիւրսալի ծանօթ հաւաքոյթին յաջողութեանը մէջ և որ տակաւին կը շարունակէ Որբախնամիս ընծայաբերել իր թանկագին ծառայութիւնները։

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԻՔ ՎԻՃԱԿԱՆԱՆՈՒԹԻՒՆ

Տիկնոնց Յանձնախումբին հետ համախորհուրդ որոշած ենք վիճակահանութիւն մը կազմակերպել 10 դրուշնոց 10,000 տոմսերով, զորոնք մաադրած էինք զետեղել նաեւ Եզիստոսէն դուրս, Այս գործը կը յանձնենք մեր յաջորդներուն։

Ա. ՄԻՈՒԹԵԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՅԻՉ ՏԱՐ

Հայ Ազգ. Միութիւնը Մարտ 17 թուակիր նամակով մը տեղեկացնելով թէ՝ Միութեան վակատար

Ժողովին մէջ գոյացած համախոհութեան մը համաձայն, այսուհետեւ 30 ներկայացուցիչներէ պիտի բազկանար իր կազմը, Որբախնամը կը հրաւիրէր երեք ներկայացուցիչներով մասնակցիլ Ազգ. Միութեան գործերուն:

Այս առաջարկը սիրով ընդունեցինք, և Աղեքսանողրիոյ մեր քոյր Վարչութեան հետ խորհրդակցաբար որոշեցինք որ Ազգ. Միութեան կազմին՝ Դահիրէն 2 (յանձինս Տեարք Ա. Տէր Սահակեանի և Յ. Մարզպանեանի) և Աղեքսանողրիա մէկ (յանձին Տեարդիգոր Մանուկեանի) անդամներով մասնակցինք: Ի դէպ է ըսել, թէ Վարչութիւնս միշտ սիրած է աշխատիլ Հայ Ազգ. Միութեան կողքին, և այդ ուղղութեամբ հրահանգ տուած է Կիլիկիա զրկած իր Պատուիրակութեան:

ՄԵՐ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԳՈՅՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Անխառն գոհունակութեամբ կուգանք տեղեկացընել Պատ. Ժողովիդ թէ մեր գրեթէ երկու տարուան պաշտօնավարութեան շրջանին սեղանի վրայ եկած բոլոր խնդիրները կարգադրուած են միշտ խորհրդակցութեամբ Աղեքսանողրիոյ մեր քոյր Հատուածին Վարչական Ժողովին հետ: Եւ պարտք կը համարենք այս տեղ չնորհակալութեամբ արձանագրել մեր քոյր Հատուածին թէ՛ հին և թէ նոր Վարչութեանց անդամներուն լայնախոհութիւնը, գործին հանգէպ ունեցած տաք վերաբերումը և զմայլելի անձնուիրութիւնն ու յարատեւութիւնը:

Մենք ոգեւին պիտի մաղթենք որ՝ մեր յաջորդները եւս նոյնքան և աւելի նուիրումով, և ամէն

բանէ աւելի որբերուն շահը և Ընկերութեանս բարդաւաճումը նկատի ունենալով, գործը պահեն իր բարձրութեան վրայ:

ՏԻԿԱՆՑ ՅԱՆՁԱԱԽՈՒՄԲԵՐ

Երկու հատուածներու Տիհնանց Յանձնախումբերը, իրենց դոյութեան սկիզբէն ի վեր, արժանաւոր կերպով կատարեցին իրենց վրայ դրուած պարտականութիւնները, հոգեւին նուիրուելով մէկ կողմէն մեր զոյգ Հանդերձարաններուն գործերուն և միւս կողմէն լայնօրէն աջակցելով մեզի, ուր որ հարկ էր և ուր որ կրնային:

Հ. Ե. Ք. ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

ՈՐԲԱԽՆԱՄԻՍ ԳԱՆՁԱՆԱԿՆԵՐՈՒ ՅԱՆՁԱԱԽՈՒՄԲ

Հակառակ տեղական վերջին գէպքերուն՝ կորովի կերպով իր գործը շարունակեց Գանձանակներու Յանձնախումբը, որուն ժիր անդամներուն և յոզնիլ չղիտցող նախազահին՝ վեր. Հ. Խանդամուրի կը յայտնենք մեր ամենախորին չնորհակալիքը, երկու տարուան մէջ անոր սնտուկին բերած 1000 ոսկիի գեղեցիկ գումարին համար:

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱԿՐԱՆՔԸ

Հաճելի պարտականութիւն մը կը համարենք յայտնել նաեւ որ ժողովուրդին ստուար մասը, մեր պաշտօնավարութեանը ամրող տեւողութեանը, որբերուն հանդէպ ցոյց տուած իր գուրգուրանքին և Որբախնամիս հանդէպ ունեցած գործնական համակրանքին ճոխ աղացոյցները տուաւ, որուն համար, և յանուն որբերուն, կը յայտնենք մեր խորին երախ-

տաղիտութիւնը : Մեր մասնաւոր շնորհակալիքը պարտաւոր ենք յայտնել նաեւ Վիճակիս բարեջան Առաջնորդ և Ընդհ . Ժողովիդ նախագահ Գերապատիւ Տէր Թորգոմ Սրբ . Եպիսկոպոսին , որ չի դադրեցաւ երբէք իր հայրական հոգածութեան առարկայ դարձընելէ Որբախնամիս գոյութիւնն ու գործունէութիւնը : Շնորհակալութիւն նաեւ ի մասնաւորի Եղիպատոսի և Արտասահմանի հայ մամուլին և մօտաւոր թէ հեռաւոր բոլոր համակիրներուն , որոնք այս կամ այն կերպով օժանդակեցին մեր Որբախնամ Գործին :

ՀԱՇՈՒԵՏՈՒԹԻՒՆ

Հաշուեկշիռը (1 նոյեմբեր 1918 էն մինչեւ 31
Յուլիս 1919) կցուած է ներկայ Տեղեկագրիս:

Առենադպիր

Յ. Յ. ԳԱԼԵՐԻՑԵԱՐԵԱՆ

Առենապետ

U. S. GOVERNMENT.


Գանձապետ

Անդամք .—

8. ШІССЕРДІЛІК

6. ԳԵՐԱՅԻՆ

8. Մ. ՊՉԱՔՃԵՐՆ.



Դահլիճ, 31 Յուլիս, 1919.



ՀԱՅՈՒԹԻՒՆ ԳՅԱ

Ա Կ Ե Մ Ա Խ Ա Հ Ա Հ

ԵՇԻ ԱՎԱԽՍ Ի ԱՋՅԱԲ ՀՀ ՊԵՐՍԵՑՈՎ 8101

Արքայի Առաջնորդության տուրքական

և Հայութիւնը, ամբողջ աշխարհը

պետք է անդամ և անառաջարձու

ամայալու առաջարձու և անվանուած

առաջարձու առաջարձու

(. մայ գայդի առաջարձու) մայ առաջարձու

պատուած և առաջարձու գայդի

պատուած առաջարձու առաջարձու

առաջարձու առաջարձու առաջարձու

պատուած առաջարձու առաջարձու

Ձ. Ա. Ա. 1224 Հայութիւն

1225-1226 11. 06. 19

06. 09. 11 10. 09. 19

06. 09. 12 10. 09. 19

06. 09. 13 10. 09. 19

06. 09. 14 10. 09. 19

06. 09. 15 10. 09. 19

06. 09. 16 10. 09. 19

06. 09. 17 10. 09. 19

06. 09. 18 10. 09. 19

06. 09. 19 10. 09. 19

06. 09. 20 10. 09. 19

06. 09. 21 10. 09. 19

06. 09. 22 10. 09. 19

06. 09. 23 10. 09. 19

06. 09. 24 10. 09. 19

06. 09. 25 10. 09. 19

06. 09. 26 10. 09. 19

06. 09. 27 10. 09. 19

06. 09. 28 10. 09. 19

06. 09. 29 10. 09. 19

06. 09. 30 10. 09. 19

06. 09. 31 10. 09. 19

06. 09. 32 10. 09. 19

06. 09. 33 10. 09. 19

06. 09. 34 10. 09. 19

06. 09. 35 10. 09. 19

06. 09. 36 10. 09. 19

06. 09. 37 10. 09. 19

06. 09. 38 10. 09. 19

06. 09. 39 10. 09. 19

06. 09. 40 10. 09. 19

Հայութիւն ԱՎԱԽՍ

Հայութիւն ԱՎԱԽՍ

Հայութիւն ԱՎԱԽՍ

Հայութիւն ԱՎԱԽՍ

Հայութիւն ԱՎԱԽՍ
Հայութիւն ԱՎԱԽՍ
Հայութիւն ԱՎԱԽՍ
Հայութիւն ԱՎԱԽՍ

Հայութիւն ԱՎԱԽՍ

322
922

Հայոց Հայ Որբ. Ընկ. Դասեիրէի Հատուածին.

Society for Armenian Orphans.

P. O. Box 1498

Cairo, Egypt
